

անսնց չնորհած պատիւը , այսինքն մեծ նիշանի իֆթիխարը և թուր չնորհելով իրեն որ կապէ , և իրեք թուղլու փաշյի միաձեւ ոսկեկար հագուստը՝ որ հազնի Պայրամի հանդիսին օրը , և անոնց հետ միաշար ձի հեծնի : Ի այց պերճապատիւ Լարապետ Աէլէպին վսեմական խոնարհութեամբը ինքզինքը արժանի չսեպելով այս գերաստինան պատուոյն , արքային ոստը իյնելով , կ'աղաքէ որ իր ծերութիւնը ազատ ընէ այսպիսի մէկ ծանր պատուէ մը . թագաւորն ալ տեսնելով որ իր սիրականը կը նեղի այս չնորհքէն , աղատ կը կացընէ ծանրութենէն , և միայն փաշաներու նման նիշանի իֆթիխարը կը չնորհէ , և թուր և բանած որմալը հազուստ , ու միայն անունը կը փոխէ պատոյն , որ կ'ըսուի բութպէէ վալ . այս պատիւը ունեցող անձին անցնելու ատեն՝ պահակ կայնող զինուրները անդամբարեւի կը կայնին , որ դեռ բայէի եղած բան չէր : Ո՞ե՞ծ չնորհք , բայց համեմատ այս հաւատարիմ անձին արդեանցը և բարերարին գթած սրտին , և մեծ պատիւ ազգիս և քաջալեր ամենուն , որ այսպիսի փափուկ և բարեսիրտ տիրոջ ծառայութեան մէջ են :

Ի՞յս փառաւոր պատուէն վերջը նոր օրերս ալ վեհափառ թագաւորը գարձեալ Տիւզեան գերդաստանին վրայ ունեցած հաճութիւնը ցուցընելու համար՝ թէ Լարապետ Աէլէպիին և թէ եղամորը Պօղոս Աէլէպիին և թէ իրենց եղամորդուոյն Ո՞իհրան Աէլէպիին մէյմէկ նոր պատուանշաններ տուաւ՝ մըշտըննենաւոր որդուոց որդի իրենց քովը մնալու :

Հ . Մ . Ա

ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Օ անթայի չեւեւ աղբէ-բները :

Օ ԱՆԹԱՑԻ ձիւթի աղբիւրները կղզւոյն հնութեանը մեծ նշաններէն մէկն են . վասն զի ինչուան Լորոդոտոս զասոնք կը յիշէ ու կը ստորագրէ և իրմէ առնելով նաև Պաւանիաս , Պինսիոս և ուրիշները իրենց գրուածոցը մէջ կը յիշատակեն : Ի՞յս աղբիւրները կղզւոյն հարաւային կողմը կ'իյնան , քաղաքէն տասը մղոն հեռու ու ծովեզերքին մօտ : Դէպէ ՚ի ծով կտոր մը միջոց տղմուտ տեղ , որուն չորս կողմը կրային հողով պատած է , իրեք կամ չորս պատի լճակներ կան որոնց մակերեսովիլը ձիւթով պատած է : Ծրոյն շարժմունքէն այս խճային նիւթն ալ երեսը կ'ելլէ ու կը սկսի ջրին վրայ շարժիլ : Ի՞յս լճերուն մեծը կլոր է և խոր յատակ ունի , շրջապատն ալ գրեթէ նօ ոտնաշափ է , և մէջէն շատ ձիւթ կ'ելլէ : Ի՞սկէ վազած ջուրը այն աստիճան աս խժային նիւթէն կը պարունակէ որ ծով թափած տեղը եղուտ խէժը իրմէ կը բաժնուի . նոյն բանը մէկալ լճերէն վազած ջրէ . րուն վրայ ալ կը տեսնուի : Տարուան մէջ անգամ մը ասոնց ձիւթը ժողվելու կ'ելլեն և ըսածներնուն նայելով ամէն մէկ անգամուն հարիւր տակառէն աւելի ձիւթ կ'ելլէ : Ի՞սկայ աւելի նաւ ձիւթուելու կը գործածուի քան թէ նաւու չուան , վասն զի ասոնց աղէկ չգար :

Ի՞յս ձիւթի աղբիւրները իրեք հազար տարիէն ՚ի վեր միշտ նոյն վիճակին մէջ մնացած ըլլալով՝ բնութեան զարմանալի յարատեւութեանը օրինակ մընեն : Ի՞նչպէս որ ասկէ հազարաւոր տարիներ առաջ Լորոդոտոս այս աղբիւրները կը ստորագրէ՝ նոյն են բոլորովին հիմայ ալ , վրանին ամեննեին տարբերութիւն մը չտեսնուիր . և ինչպէս հին ատեն նոյնպէս նաև ինչուան մեր օրերը ձիւթը լճերուն մէջէն մրտենիի կամ ուրիշ ծառերու ձիւղերով կը հանեն :

Օ անթայի բնակչաց կարծիքն է որ երկրաշարժի ատեն ձիւթը աւելի առատ կ'ըլլայ . կրնայ ըլլալ որ նոյն ցնցմամբ ձիւթը իր հանքէն բամնուի ու վերելլէ : Այս աղբիւներուն մօտերը աւելի քիչ բնակիչ կայ քան թէ կղզւոյն ուրիշ կողմերը :

Օ անթայի պէս գրեթէ երկիր մը չկայ ուր շարունակ երկրաշարժութիւն ըլլայ . շատ անգամ մէկ ամուռան մէջ մօտ երկու իրեք շարժ կ'ըլլայ . և 1811 ն գարնան երեսուն քառասուն օրուան մէջ անդադար զանազան շարժեր եղան , և տներուն ու բերդին ճեղքուածներուն այս բարձր լինելէ թէ բաւական սաստիկ էն եղեր : Ոսկորաբար այս շարժերը կղզւոյն ամէն դին չեն իմացուիր , միայն քիչ մը միջոց տեղ . և շատ անգամ այս շարժերը վեր ՚ի վերոյ ցընցմունք մըն են : Խակ բնակիչքը ապահով էն . վասն զի օդէն կ'իմանան որ շարժ պիտի ըլլայ , ինչու որ շարժ ըլլակն առաջ դժուարացնութիւն մը կը զգան , որ ըսել է թէ մթնոլորտը ծծմբով լցուեր է . և շատ անգամ շարժէն ետև անձրև կուգայ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏ

ՀԵՐՅԱՔԱՐ :

ՀԵՐՁԱՔԱՐԸ¹ տեսակ մը դիւրաչերձ ու թեթև քար է , որ թերթթերթ կը բամնուի ու զանազան գունով կ'ըլլայ , մութ , դորշ կամ կապուտ , և քիչ անգամ կանաչ կամ կարմիր : Վետնէն նոր հանուած ատենը կակուղ կ'ըլլայ , բայց օդ տեսնելով այնչափ կը կարծրանայ որ դիւրաւ բարակ թերթեր կը բամնեն ու տեղ տեղ դարոցներու մէջ կը գործածէն վրան զիր փորձելու համար . ուրիշ տեղուանիք ալ տներուն երդիքը այս թերթերով կը

ծածկեն : Եցկրաբանք իրեք տեսակ հերձաքար կը զանազանէն . ան . Վախական հերչատար , որ կաւախառն կ'ըլլայ . բ . Երկրորդահան հերչատար , որուն բաղադրութիւնն է գայլախազ , պաղեղ , մակնեսիա , կիր , երկաթ . դ . Լորանան հերչատար , որ հանքային ածուխի խաւերուն մէջ կը գտնուի :

Հերձաքարի գործածութիւնը հիները չեն գիտեր , և Պլինիոսի գրուածոցը մէջ ամենեխն ասոր վրայ յիշատակութիւն չկայ , բայց հիմայ շատ կը գործածուի , մանաւանդ տներու երդիքը ծածկելու համար : Ը ատ տարի չկայ որ Վաֆրէտ Ֆէյք անունով մէկը Վարլաբրուն քաղաքը տեսակ մը արուեստական հերձաքար հնարեց , և զանազան փորձերով տեսնուեցաւ , ան . որ չորս ամիս միակերպ պաղ ջրի մէջ ձգուելով ամենեխն փոփոխութիւն մը չկրեց . բ . որ սաստիկ կրակի վրայ դրուելով 15 վայրկեամէն ետև հազիւ թէ ձեր կորսընցուց , և սե ու խիստ թիթեղ մը դարձաւ : Ուստի աս բանէս վստահութիւն առնելով Վարլաբրուն քաղաքը փայտէ տուն մը շինեցին ու չորս դին ալ ներսէն այս հերձաքարով պատեցին . ետքը տունը այրելու նիւթերով լեցուցին ու կրակ տուին , տեսան որ բոլոր տանը մէջ եղածներն այրեցան ու տունը անվնաս մնաց : Լոյն փորձը Պիոլին փորձեցին ու նոյնպէս գտան : Ը ատ աղէկ կ'ըլլայ թէ որ տան մը երդիքը այս արուեստական հերձաքարով գոցուելու ըլլայ , որ թէ բնական հերձաքարէն թեթև է , և թէ անոր պէս անձրւէ անթափանցելի է , ու թէ կրակի կը դիմանայ . բայց ասոր թերթերը երդիքին վրայ պղնձէ գամերով հաստատելու է ու ծակտիքը տեսակ մը ծեփով ծեփելու , որուն բաղադրութիւնն է վուշի եղ , սպիտակաղեղ ու բրտի կաւ :

Այս արուեստական հերձաքարին բաղադրութեան նիւթերն են , ան . Ճերմակ , կարմիր հայկաւակ . բ . բրտի կաւ կամ կրի ածխուտ . դ . աղէկ սոսինձ . դ . զանգուած թուղթ . ե . կտաւատի եղ :